Գուրգեն Մահարի

Սեւ մարդը

6

Օրամուտի մանուշակագույն աղջամուղջում օրորվում է ուղղիչ-աշխատանքային ճամբարն իր շրջակայքով: Սառնամանիքը սեղմում է: Աշխատավորական բրիգադները «տուն» են վերադառնում: Ինչ լավ է, երբ ֆիզիկական աշխատանքից հոգնած, ցրտից այրվող դեմքով բարաք ես մտնում ու զգում ես վառվող վառարանի անճառելի ջերմությունը: Երևի աշխարհում չկա այնպիսի մեծ հաճույք, քան ֆիզիկական աշխատանքից հետո հանգստանալու հաճույքը: Մենք ազատվում ենք ավելորդ շորերից, բարձրանում տախտակամածների վրա և անձնատուր ենք լինում այդ գերագույն հաճույքին: Փառք կյանքին և Նուրանբանին, մանավանդ Նուրանբանին, որը վառ է պահում վառարանի կրակը և ջերմությունը: Նուրանբան, ես սիրում եմ քեզ:

Համար 7 բարաքի ավագ Կոլոկոլնիկովը մոտենում է բարաքի մեջտեղ դրված ընդհանուր սեղանին, մի ձեռքում իր վառվող ճրագը, մյուսում՝ նամակների մի փաթեթ: Տիրում է լռություն: Կոլոկոլնիկովը դնում է ակնոցը:

— Պասյատոսյո՛ւչոս, — հնչում է նրա գրեթե կանացի ձայնը:

Վառարանի աջակողմից, վարի տախտակամածից դուրս է թռչում մի հաղթանդամ երիտասարդ՝ թխադեմ, թխամազ, բաց կապույտ, թախծոտ աչքերով:

— Պարի՛ր, — ասում է Կոլոկոլնիկովը աջ այտը վեր քաշելով, մի դիմախաղ, որը նրա ժպիտն է:

Լուրջ դեմքով պարզում է իր ձեռները աջ ու ձախ, թեթև բարձրանում է ոտի մատների վրա, իջնում և ստանում է նամակը Եորգո Պապատոսյուլոսը:

— Ռոստովսկի Վիկտոր Ռոմանովիչ . . .

— Այստեղ եմ, — լսվում է հրճվալից մի կոինչ . Երկրորդ հարկի տախտակամածից սյունը գրկած վար է սահում շեկ, ցից մազերով մի ծերուկ՝ ակնոցները ճակատին . գլխավոր դերձակ Ռոստովսկին մոտենում է ձեռները բարձր, որպես թե պարելով, ստանում նամակը:

— Բագիրբեգով Մամալի թե Պապայի, սատանան գիտի, չեմ ջոկում:

Իմամ Ալի Բագիրբեգովը մոտենում է հեգնական ժպիտով: Նրա անունը Կոլոկոլնիկովը դիտմամբ խեղաթյուրում է: Նրան հայտնի է Իմամ Ալու ընդհատակյա խարդավանքները՝ բարաքի ավագ դառնալու համար:

— Կարող ես չպարել: Երբ աստծո և վերակարգիչի օգնությամբ ավագ դառնաս, այն ժամանակ կպարես: Վերցրու, խեղճ մարդ, ռուսերեն ո՛չ գուգու, ո՛չ մումու ու դեռ ուզում է . . . Աչքիս չերևա՛ս: Ֆրենկել Իսիդոր Գալակտիոնովիչ:

— Ես եմ Ֆրենկելը:

Առաջ է վազում գունդ ու կլոր, կլոր ակնոցներով և կարմիր թշերով «գործարար բակի» պահեստապետ Ֆրենկելը . այս այն Ֆրենկելն է, որ Լյալյայի վկայությամբ նախ ֆսֆսում է և հետո, որ ավելի կարևոր է, նայում է Լյալյայի վրա, ինչպես ագռավը մի կտոր պանրի վրա, իսկ Լյալյան պանիր չէ, իսկ եթե պանիր է . . .

Նա վերցնում է եռանկյունի նամակը, հոտոտում է և ասում .

— Ծանրոցի հոտ եմ առնում:

Երբ նա անցնում է մեր մոտով, ես կռանում եմ տախտակամածին և ասում եմ նրա ականջին .

— Ֆրենկել, Լյալյան պանիր չէ, իսկ եթե պանիր է, քեզ համար չէ . . .

Նա նայում է ինձ, կլոր ակնոցների տակ արագ-արագ թարթում աչքերը և կարծես հասկանում է .

— Չեմ սիրում հիմար կատակներ:

— Ֆրենկել, ուրեմն մի՛ զբաղվիր հիմար կատակներով, — գոռում եմ ես նրա ետևից:

— Պոպեյկո Միխաիլ Միխայլովիչ . . .

Նամակներ կան Ալմա-Աթայից և Ռոստովից, Սամարկանդից ու Երևանից, Մինսկից, Մախաչ-Կալայից, Մոսկվայից, քաղաքներից, ավաններից, գյուղերից: Բոլորն էլ գրում են, որ շատ լավ են, չափազանց ողջ և պետք եղածից ավելի առողջ են, որ հեռու չէ մեծ հանդիպման օրը և որ նրանց տանջում է միայն կարոտը, սրտամաշ կարոտը, որի համար և արտասվում են, իսկ այնպես ապրում են ուրախ, չափազանց ողջ և պետք եղածից ավելի առողջ:

— Ասացե՛ք խնդրեմ, ախ, դու, խոլերա, տեսա՞ք արածը . . .

Սարոկինն է, Իվան Պետրովիչ Սարոկինը, քույրը գրում է, որ կինը՝ Նադյան, ամուսնացել է:

— Ասացե՛ք խնդրեմ, — կրկնում է նա ուշադրությամբ նայելով նամակին, կարծես հազվագյուտ նկար է դիտում, — և ո՞ւմ հետ, մեր քաղսովետի կոմունալ բաժնի վարիչ Բուրդենկոյի հետ, նա, որ ինձ վրա ցուցմունք է տվել . . . Եվ տեղն է այդ սրիկային, — շարունակում է նա և չգիտես ինչու ժպտում, — կինս նախ չբեր է, հեմոգլոբինից խեղճ, ջղային է ու սրտի արատ ունի, սարսափելի խանդոտ է ու փառասեր, տե՛ղն է այդ հարբեցող Բուրդենկոյին, թող տանջվի՛, հոգի՛ն դուրս գա:

Երկու բռունցքները ծնկներին, մազակալած, տանջված դեմքով, անթարթ, խոշոր աչքերով ճրագին է նայում Վլադիմիր Մավրինը, — կինը գրում է, որ նրանց միակ որդին, Սերգեյ Մավրինը զոհվել է Բելոռուսական ճակատում:

— Ցուցմո՞ւնք կտաս ինձ վրա, լի՛րբ, գրպարտիչ, դե քաշի՛ր պատիժդ, դավաճանի մեկը . ասացե՛ք խնդրեմ, — շարունակում է բարձրաձայն մտածել Իվան Սարոկինը . — ապրես Նադյուշա, շա՛տ ապրես, իմ վրեժը հանեցիր, Նադյուշա, սիրելիս . . . ախ, դու, խոլերա . . .

Ընթրիքից հետո երևաց Սանասարը: Վիրակապերը հանել էր նա, մաքուր սափրվել: Փորձում է ժպտալ, չի հաջողվում:

— Բարձրացիր, նստիր, դեզերտի՛ր, ֆիլո՛ն, — ասում է Աշոտ դային:

Նա բարձրանում է և նստում: Զամանովը շարժվում է տեղում:

— Մի՛ վախենա, — ասում է Սանասարը նրան հայերեն, — թութունդ ինձ պետք չի:

— Ինչո՞ւ ես եկել, — հարցնում է նրան Աշոտ դային:

— Որ մի անգամ էլ քիթ-մռութիս տաս . . . բինտ է, ունեմ, — նա գրպանից հանում է գործածված վիրակապը:

— Ես քո քիթ-մռութի հետ գործ չունեմ, — ձայնը բարձրացնում է Աշոտ դային, — ես ոչ քո հայրն եմ, ոչ էլ քո խնամակալը, ես ուզում էի, որ դու մարդ դառնաս, չե՞ս ուզում, գնա՛ քա՛րշ եկ, գող-ավազակի մեկը:

— Ուրեմն ես մարդ չեմ, — ասում է նա ասես ինքն իրեն, հետո նայում է ինձ, — ասենք, ինչո՞ւ եմ հարցնում, ես մարդ-մարդահաշիվ չեմ: Պարզ է, ես էլ գիտեմ:

— Կզոջաս, տղա, — ցավով ձայնը բարձրացնում է Աշոտ դային, — կհիշես ինձ, ուշ կլինի:

Սանասարը լարվեց .

— Դատավորի պես ես խոսում հետս, այ Աշոտ դայի, բայց քո տեղն էլ նեղ է . էդքան բան որ գիտես, էլ ինչո՞ւ ես նստել էստեղ, կգնայիր ռայսովետի նախագահ: Թե՞ քեզ նստեցրել են, որ գլխիս խրատ կարդաս . . . սպեցիալնի դրա համար ես նստել, հը՞ . . .

Աշոտ դային մթնեց:

— Թե ինչու եմ ես նստել, — ասաց նա դանդաղ, — քո խելքի բանը չէ . ես գողություն կամ մարդասպանություն չեմ արել: Երևի կա մեկը, որին հարկավոր է, որ ես էստեղ նստեմ: Բայց ես չեմ կորցրել իմ մարդկային դեմքը: Աշխատում էի դրսում, այստեղ էլ աշխատում եմ: Դրսում երգելով էի աշխատում, իսկ այստեղ . . . լաց չեմ լինի . բայց հասկացիր, ում հարկավոր է, որ ես այստեղ նստեմ, նա անմահ չէ . ամենամեծ գողը ազատության գողն է, իսկ դու . . . դու ի՞նչ ես որ, մանր ժուլի՛կ, թութունի գո՛ղ . . . Զամանո՛վ, ծխել եմ ուզում:

— Զամանովը, որն արդեն փաթաթել էր մի ծխախոտ ծխելու համար, պատրաստի ծխախոտը մեկնեց Աշոտ դայուն: Ես երբեք նրան այսքան լարված, այսքան հուզված չեի տեսել: Նա մոտեցրեց իր ծխախոտը ճրագի բոցին, իսկ նրա ձեռքը դողում էր:

— Կփոխվե՞ն ժամանակները, կվերադառնանք մենք ազատ աշխատանքին, բայց քեզ նմանները . . . մեր ճակատագիրը մեր ձեռքում չի՛, գրում են մեր ճակատին, ինչ ուզում են, իսկ դո՛ւ, դո՛ւ . . .

— Դո՛ւ, դո՛ւ, . . . տեղից շարժվեց Սանասարը, — ի՞նչ դու, դու . . Ես գո՞ղ եմ ծնվել, ի՞նչ է: Ես էլ մարդ էի, բայց մարդիկ ինձ գող շինեցին: Դո՛ւ, դո՛ւ . . .

— Ե՛տ կանգնիր, մա՛րդ դարձիր, այս է իմ, ասելը . . .

— Ուշ հասար, — մռմռաց Սանասարը, — ջուրն եկել ջաղացը տարել է, չախչախն էլ հետը:

— Նո՛ր ջրաղաց շինիր, նո՛րը, լա՛վը . . .

Այդ միջոցին մոտեցավ Մամոն:

— Ուստա, այ ուստա . . .

— Ի՞նչ կա, Մամո . . .

Մամոն բարձրացավ երկու ոտքի մատների վրա քիչ երկարելու բարի ցանկությամբ և ձեռքով նշան արավ Աշոտ դայուն, որ մոտենա: Աշոտ դային կռացավ . Մամոն ինչ-որ շշնջաց նրա ականջին դեմքի ոգեշնչված արտահայտությամբ: Աշոտ դային շոյեց իր ծնոտը և մի աչքը կիսափակ մնաց մի րոպե . այդ նշանակում է, որ նա լուրջ մտածում է ինչ-որ բանի մասին: Իսկ Մամոն . . . վերստին գտած իր նորմալ հասակը, նա սպասում է, ժպտացող աչքերը չկտրելով Աշոտ դայուց: Աշոտ դային, առանց կտրվելու իր մտքերից, բաց է անում արկղը, այնտեղից հանում է մի քանի թերթ մաքուր թուղթ, ապա մի չգործածված մատիտ, խնամքով սրում է ու թուղթն ու մատիտը պարզում է Սանասարին .

— Գնա՛, ասում է, — չափարից էն կողմ մի աղջիկ կա, տո՛ւր նրան: Մամոն ցույց կտա:

— Աղջի՞կ, ի՞նչ աղջիկ, — հարցնում է Սանասարը հանկարծակիի եկած ինձ նման և մանավանդ Մամոյի նման:

— Աղջի՛կ, աղջկա պես աղջի՛կ, — ձայնը բարձրացնում է Աշոտ դային: — Վերցրո՛ւ, գնա՛:

Վարանոտ քայլերով Սանասարը գնում է դեպի բարաքի դուռը, նրան հետևում է կոտրված Մամոն:

Քիչ անց, ներս է մտնում Մամոն և քայլերն ուղղում է դեպի աջակողմյան տախտամածի առաջին հարկը, իր տեղը:

— Մամո՛, — կանչում է Աշոտ դային, — մո՛տ եկ:

— Ի՞նչ կա, — հարցնում է Մամոն դժգոհ, մինչև հոգու խորքը վիրավորված մարդու դառն արտահայտությամբ և ցույց է տալիս, որ զբաղված է ընթրիքին նախապատրաստվելու գործով: Նա վերցնում է իր ամանը, փչում՝ երևի

փոշին . . .

— Տվե՞ց, — հարցնում է Աշոտ դային:

— Տվեց:

— Գնա՞ց, — ձեռք չի քաշում Աշոտ դային:

— Խոսում են, — լինում է պատասխանը:

Հնչեց ընթրիքի զանգը:

Երկու օր Սանասարը չերևաց: Երրորդ օրը նա եկավ և առանց նախաբանի հայտնեց, որ ուզում է աշխատել բրուտանոցում:

Աշոտ դային տվեց իր համաձայնությունը:

— Լավ: